

ԱՐՄԱՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկ՝ իրավախորհրդատու,
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի
և քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և
մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԻՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՆԵՐԳԱՇՆԱԿՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻՆ

Սույն հոդվածում ներկայացվում են Սահմանադրական իրավունքի տեսության մեջ առկա հիմնախնդիրները: Նշվում են ժամանակի զարգացման ընթացքում Հիմնական օրենքի նկատմամբ պատկերացումների, մոտեցումների և փոփոխությունների տրամաբանությունը: Հատուկ շեշտադրվում է Սահմանադրական մշակույթի բավարար մակարդակի հաստատման անհրաժեշտությունը:

Հիմնաբառեր- Սահմանադրություն, սահմանադրական իրավունք, ժողովրդավարություն, սահմանադրականություն, սահմանադրական մշակույթ, սահմանադրական մշտադիտարկում:

«Սահմանադրություն» հասկացությունը լատիներենով (constitutio) նշանակում է հիմնել, սահմանել: Սակայն ամեն մի հիմնումն էլ կամ «սահմանում» սահմանադրում կամ սահմանադրություն չէ: Վերջինս հիմնականում բնորոշվում է որպես պետության Հիմնական օրենք (օրենքների ամբողջություն), որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Տվյալ օրենքի հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են.

- պետական կարգի հիմունքները,
- մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության երաշխիքները,
- պետական իշխանության համակարգը, դրա գործառույթները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,
- քաղաքական իշխանության իրականացման և անհատի քաղաքական, տնտեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները:

«Սահմանադրություն» հասկացությունը հայերենում նույնպես առաջին հերթին ենթադրում է սահմանել: Ինչպես նշում է պրոֆ. Խ. Սամուելյանը՝ միջնադարում հայ ազգային եկեղեցական ժողովները՝ իրենց վերապահելով «օրենսդիր գործոնի նշանակություն, օգտագործել են «սահմանք» եզրույթը, որը «...հաճախ կրում է «կանոնի», «օրենքի» հոմանիշ իմաստ. այստեղից էլ կանոնական որոշումներում հաճախ են պատահում սահմանել, սահմանադրել բայերը՝ օրինադրել, կանոնադրել առումով»: Միաժամանակ, «սահմանադրություն» հասկացությունը ստուգաբանվել է նաև «սահման դնելու» առումով, իշխանության սահմանները հստակեցնելու և «...անճողոպրելի որոգայթ» ստեղծե-

լու բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն դուրս գալ օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներից²:

Սահմանադրությունը դիտվում է նաև որպես ազգի կամ պետության հիմնական օրենք՝ գրված կամ չգրված, որով սահմանվում են պետության կառավարման բնույթն ու հայեցակարգը, և որը հիմնված է հիմնարար այնպիսի սկզբունքների վրա, որոնց միջոցով կառուցվում է տվյալ ազգի կամ պետության ներքին կյանքը, իրականացվում է պետության սուվերեն իշխանությունը, սահմանափակվում է իշխանությունների գործունեությունը³:

Սահմանադրաիրավական մտքի զարգացումը հայկական իրականության մեջ հազարամյակների ընդգրկում ունի: Այդուհանդերձ, սահմանադրական օրենսդրության ձևավորման նորագույն պատմությունը Հայաստանում վերսկսվում է 20-րդ դարի սկզբին՝ հայոց պետականության վերածննդով, և շարունակվում է մինչև մեր օրերը: Այն անցել է երեք պատմական փուլ, որոնցից յուրաքանչյուրին հատուկ է սահմանադրական իրավունքի իր տիպը: Սահմանադրաիրավական կարգավորումը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920թթ.) արտացոլում է շուրջ 600 տարի անկախությունը կորցրած հայ ժողովրդի պետականության վերածնունդը՝ պառլամենտական հանրապետության ձևով: 1918թ. մայիսի 26-ին լուծարվեց Անդրկովկասյան սեյմը: 1918թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունը՝ հրապարակելով անկախության հռչակագիր: Այդ հռչակագիրը սահմանադրական իրավական ակտ էր, որում ասված էր. «Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն... Ազգային խորհուրդը ժամանակավորապես

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»:

Սահմանադրությունը ներկայիս իրողություններում հանդիսանում է մարդկության կողմից ձեռք բերված հիմնարար իրավական արժեք ունեցող փաստաթուղթ: Ընդ որում, արժեքանական բնութագրման համար առավել կարևոր նշանակություն ունի սահմանադրության տարբերակումը երեք ասպեկտներում.

1. իբրև «ցանկալի իրավունք», բնական իրավունքին համապատասխանող,
2. իբրև պոզիտիվ իրավունք, որն արտահայտվում է Հիմնական օրենքի տեսքով,
3. Իբրև իրացվելի, փաստացի սահմանադրություն:

Բնական իրավունքի տեսության մեջ Սահմանադրությունն, ըստ էության, պատկերացվում է որպես կատարյալ, հիմնված հանրորեն ճանաչված իրավական, հասարակական ժողովրդավարական սկզբունքների, արդարության պատկերացումների, բարոյականության, առաջադիմական, հասարակական գիտակցության, հասարակության արդի պահանջների, ընդհանուր մարդկության առաջադիմության մակարդակի վրա: Վերջին հարյուրամյակների ընթացքում շատ է խոսվել իրավական, ժողովրդավարական պետության «կատարյալ» սահմանադրության մոդելի մասին: Դեռևս 1928թ. հրատարակված «Սահմանադրության մասին ուսմունք» մենագրության մեջ Կ. Շմիթը խոսում էր «քաղաքացիական իրավական պետության սահմանադրության կատարյալ հասկացության» մասին⁴:

Պոզիտիվ իրավունքի տեսության մեջ, բնականաբար, սահմանադրությունը բնութագրվում է որպես իրավաբանական սահմանադրություն՝ իրավական նորմատիվ ակտ (ակտերի համախումբ), որն իր մեջ պարունակում է այնպիսի սահմանումներ, որոնք ունեն բարձրագույն իրավաբանական ուժ:

Սահմանադրության արժեքը հավաստվում է այն սոցիալ-քաղաքական էությանը, լեգիտիմությանը, այսինքն այն հանգամանքներով, թե որքանով է սահմանադրությունը օբյեկտիվորեն արտահայտում ժողովրդի շահերը, որքանով է այն ընկալված հասարակության կողմից, որքանով է հասարակությունը պատրաստ ապրել Սահմանադրությունով: Քաղաքական արժեքն արտահայտվում է նրանում, որ այն արդյունք է տարբեր քաղաքական ուժերի կողմից ձեռք բերված համաձայնության, որտեղ ներառվում են բոլոր ուժերի շահերը: Այդ ամենն ի վերջո հանգեցնում է հասարակության կայուն զարգացմանը, քաղաքական համակարգի

անխափանդությանը, ինչպես նաև բնականոն զարգացմանը⁵:

Սահմանադրությունը յուրաքանչյուր պետության համար ոչ միայն հիմնական օրենք է, այլև յուրօրինակ պետական խորհրդանիշ, որն իր մեջ ամփոփում է այն ընդունող ժողովրդի ինքնությանը բնորոշ արժեհամակարգերն ու իդճերը: Սահմանադրության արժեքանական որակները դրսևորվում են նրանում ամրագրված նորմ-նպատակների, նորմ-սկզբունքների և կոնկրետ ու հիմնարար իրավահարաբերություններ կանոնակարգող դրույթների միջոցով: Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրությունը հայ ժողովրդի անկախ պետականության իրականություն դարձած դարավոր երազանքն արտահայտող առաջին Սահմանադրությունն է: Այդ փաստն արտացոլված է Սահմանադրության նախաբանում, որն արձանագրում է, որ հայ ժողովուրդը Սահմանադրություն է ընդունում «իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը»: Պետականության դարավոր կորստից հետո ժողովրդավարական ճանապարհով իր ապագայի համար սահմանադրական երաշխիքների ստեղծումը բացառիկ իրողություն դարձավ հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Դրանով էր պայմանավորված, որ Սահմանադրության նախաբանն արձանագրեց, որ այն ընդունում է հայ ժողովուրդը, առանց որևէ մեկի կողմից թելադրանքի, իր հավաքական կամաարտահայտման ճանապարհով: Այս ամենը, իհարկե, չի նշանակում, որ Սահմանադրության նախաբանը զուտ փաստեր է արձանագրում: Այն հանդիսանալով Սահմանադրության բաղկացուցիչ մասը՝ ցույց է տալիս, որ գիտակցելով փաստը, ընտրվել են որոշակի արժեքներ՝ սկզբունքներ և նպատակներ, որոնց պետք է ծառայի բուն Սահմանադրությունը: Սկզբունքի և նպատակի միջև այս դեպքում հստակ սահմանագիծ անցկացնելը դժվար խնդիր է և դրանով է պայմանավորված սահմանադրագիտության տեսության մեջ դրանք բարձրագույն սկզբունքներ, սահմանադրական արժեքներ կամ հասկացություններ կոչելը: XX-րդ դարը բազմաթիվ փորձությունների ենթարկեց ամբողջ աշխարհը: Մի դեպքում՝ ակտիվ հաջողությունների զարգացումն էր գիտության ոլորտում, սակայն անդառնալի հետևանքներ առաջացան հակամարտությունների և պատերազմների արդյունքում: Իրավունքի զարգացումը հաջորդիվ վկայում է, որ սահմանադրական ժողովրդավարությունը այդուհանդերձ գերակշռեց փորձությունների միջով անցած երկրներում տեքստային լուծումները: Թեպետ գրեթե բոլոր ժողովրդավարության հետ իրենց առնչող երկրների

սահմանադրություններում առկա են իրավունքի հիմնարար սկզբունքները, այդուհանդերձ, տեքստային ձևով դրանք ամրացնելն ամենևին էլ ավարտին հասցված գործ չէ: Էական է, թե՛ որքանով է Սահմանադրությունն իրացվում իրական կյանքում, որքանով այն չի հաջողվում կյանքի կոչել և, առհասարակ, առկա է սահմանադրական կարգ, թե՛ ոչ, արդյոք իրավունքի գերակայությունը երաշխավորված է: Գերխնդիրը եղել և շարունակում է մնալ հանրային կյանքի իրողությունները, սահմանադրական լուծումներին ներդաշնակելը:

Սոցիալական պրակտիկայի և իրավական մտքի աստիճանական զարգացումը հարստացրին «սահմանադրություն» հասկացությունը՝ այն դիտարկելով որպես արժեհամակարգային երևույթ, որպես ոչ միայն պետության, այլև հասարակության հիմնական օրենք: Պատմական իրողությունն այն է, որ յուրաքանչյուր երկիր ու ժողովուրդ սահմանադրական մշակույթի ձևավորման ու սահմանադրական իրողության հաստատման իր ինքնուրույն ճանապարհն է անցել՝ ավելի կամ պակաս փոխառելով այլոց փորձը, կատարելով իր արժեքային համակարգից բխող հավելումներն ու ամբողջականացումը: Էականն այն է, որ սահմանադրական մշակույթը և բուն Սահմանադրությունը տվյալ հասարակության, սոցիալական կոնկրետ հանրության արժեքային համակարգի վրա ձևավորված իրողություններ են: Սահմանադրական մշակույթը չի կարող ապագային լինել: Առաջին հերթին Սահմանադրությունն է կոչված ապահովելու վերագայինի ու ազգայինի ներդաշնակությունը, համամարդկային արժեքների ու ազգային առանձնահատկությունների խելամիտ համատեղումը: Սահմանադրական մշակույթը վերացական հասկացություն չէ, այն ընկած է Սահմանադրության արժեքանության հիմքում, դրսևորվում է սոցիալական հանրության կենսագոյի բոլոր ոլորտներում, արտահայտվում է դարերով մշակված, փորձարկված, ապրված արժեքների ու պատկերացումների միջոցով: Յուրաքանչյուր ազգի մշակույթը՝ նրա իմաստավորված գոյությունն է՝ արժևորված ներկայությունը ժամանակի մեջ: Յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի սահմանադրականության արժեքային կողմնորոշիչները պայմանավորված են նրա սոցիալ-մշակութային դիմագծով և թելադրում են կոնկրետ սահմանադրական լուծումների առանձնահատկությունները: Ամփոփելով՝ կարելի է ընդհանրացնել, որ իրավական պետությունում «սահմանադրական մշակույթ» հասկացությունը կարող է բանաձևել որպես պատմականորեն ձևավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության փորձառությանը հարստացած համոզմունքների, պատկե-

րացումների, իրավընկալման, իրավագիտակցության՝ հանրային ճանաչողության առանցքը կազմող արժեքային որոշակի համակարգ, որը հիմք է հանդիսանում սոցիալական հանրության համար հասարակական համաձայնությամբ սահմանելու և երաշխավորելու իր ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնները՝ տվյալ բանաձևման շրջանակներում «սահմանադրականությունը» հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունը, դրանց՝ որպես ապրող իրողության գոյությունն է հանրային կյանքում, յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պետաիշխանական լիազորությունների իրականացման գործընթացում: «Սահմանադրականությունը» սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում: Խնդիրը հանգում է ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառմանը, այլ այն սոցիալական համակարգի ձևավորմանը, որում Սահմանադրությունն իրացվում է այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ որպես դրա գոյության կենսապայման: Երկրում սահմանադրական մշակույթի դրսևորման կարևոր բնութագրիչներից է սահմանադրական պատշաճ մակարդակի իրավագիտակցությունը: Վերջինս ամենաընդհանուր գծերով ենթադրում է հասարակական հարաբերություններում սահմանադիր նորմերի անհրաժեշտության գիտակցում, դրանց սահմանում, այդ նորմերով ապրելու ու գործելու, դրանք հարգելու ու պաշտպանելու պատրաստակամություն: Սահմանադրական իրավագիտակցության սուբյեկտ են հասարակության բոլոր անդամները, նրանց տարաբնույթ կազմավորումներն ու ինստիտուտները, այդ թվում պետությունը՝ ի դեմս պետական իշխանության ինստիտուտների: Հասարակության անդամների ու պետական ինստիտուտների սահմանադրական իրավագիտակցության միջև եղած աններդաշնակությունը սոցիալական անհամաձայնությունների ու կատակլիզմների պատճառ կարող է հանդիսանալ: Քաղաքացիական հասարակության հիմնական բնութագրիչներից մեկն էլ այն է, որ պետությունն առաջնորդվում է հասարակության սահմանադրական իրավագիտակցությամբ, որի հիմքն իրավունքի գերակայության երաշխավորումն է և իրավունքով իշխանության սահմանափակումը: Պետական իշխանության կարևորագույն առաքելություններից է սահմանադրաիրավական հարաբերությունների յուրաքանչյուր սուբյեկտի մոտ սահմանադրական այնպիսի իրավագիտակցության ձևավորումը, որի հիմքում պետք է ընկած լինեն սահմանադրական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հիմնարար արժեքների ու սկզբունքների խոր, իմաստավորված ու միասնական ընկալումը, դրանց հետևողական իրացումը: Բնականաբար, քաղաքացին, պետական իշխանության տարբեր մարմինները, սահմանադրաիրավական հարաբերությունների տարբեր սուբյեկտներն օժտված են սահմանադրական տարբեր իրավունակությամբ: Վերջինս պայմանավորված է նրանց սահմանադրական գործառույթի բնույթով, իրավասությունների ծավալով, իրավունքներով ու պարտականություններով: Սահմանադրական մշակույթի կարևոր բնութագրիչներից է և այն, թե սահմանադրական իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները որքանով են ներդաշնակված ու հակակշռված, որչափով է երաշխավորված այդ հավասարակշռության պահպանումը դինամիկայում:

Սահմանադրական մշակույթի համակարգային ամբողջականության տեսանկյունից այնքան էլ կարևոր չէ, թե պետությունը կառավարման ինչ ձև է ընտրել՝ նախագահական, կիսանախագահական, թե՛ խորհրդարանական: Դա առաջին հերթին քաղաքական ընտրություն է: Սակայն չափազանց կարևոր է, որպեսզի ցանկացած ձևի պարագայում հետևողականորեն իրացվեն սահմանադրական հիմնարար սկզբունքները, բացառվեն ներսահմանադրական հակասություններն ու փակուղային վիճակները, Սահմանադրությունը հանդես գա որպես դինամիկ օրգանական ամբողջականություն:

Վերը նկարագրված խնդիրները հանգեցնում են ամբողջական այնպիսի մի պատկերի, որում արտոցովված չէ Սահմանադրության, որպես մարդու իրավունքների ամենակարևոր ձեռքբերում, արժեքի գիտակցումը, իսկ այդ արժեքներով սալբելու ցանկությունը կարծես թե արդիական չէ: Տեսություն մեջ նոր մոտեցումներ են ձևավորվում առկա բացերը վերացնելու կապակցությամբ, քայլեր են կատարվում Սահմանադրական նորմերի ընկալման ուղղությամբ: Հանրակրթական դպրոցներում նույնիսկ անցնում են «Իրավունք» առարկան, որտեղ փորձ է կատարվում փոքրուց երեխաների մոտ ձևավորել իրավունքի վերաբերյալ պատկերացումները: Անկասկած այդ մոտեցումները անհրաժեշտ են, սակայն հասարակության համընդհանուր մակարդակով իրավունքի գերակայության ամրապնդման, սահմանադրականության իրական հաստատման, սահմանադրական լուծումների անհրաժեշտ կիրառման նպատակով անհրաժեշտ են ավելի նոր մոտեցումներ: Այդ նպատակով հարկ է ստեղծել այնպիսի մեխանիզմ, որն ի գործու կլինի ապահովել իրավագիտակցության բարձր մակարդակը, հասարակական հարաբերություններում

համամարդկային արժեքների բացակայությունը լրացնել համակեցության կանոններով, փոխել իշխանության մարմինների քաղաքական վարքագիծը, զսպել իշխանության օլիգարխացումը, իշխանության նկատմամբ առաջացնել վստահություն: Այս և բազմաթիվ այլ հարցեր կարող են ստանալ իրենց լուծումը իրավունքի գերակայության և իշխանության իրական բաժանման սկզբունքի անմիջական կիրառման դեպքում: Դեռևս իր ժամանակին Ջեյմս Մեդիսոնն է ընդգծել, որ մրցակցող ու հակադիր շահերի սահմանադրական հաշվեկշռումը կարող է զսպել իշխանությանը և երաշխավորել ազատությունը: Այդ խնդիրների լուծումը պահանջում է հսկայական ջանքեր՝ ուղղված իրական սահմանադրականության հաստատմանը, որը կարող է իրականացվել սահմանադրական ախտորոշման ու մշտադիտարկման համակարգի ներդրմամբ: Այդ համակարգը կներառի գործառույթների հատուկ ցանկ, սուբյեկտների կազմ, իրագործման նպատակ և դրան հասնելու կանխատեսվող ժամկետներ, ինչպես նաև պատասխանատվության հնարավոր մեխանիզմներ:

¹ Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 46:
² Որոգայթ փառաց (Հակոբ և Շահամիր Շահամիրյաններ), Երևան, 2002, էջ 15:
³ Henry Campbell Black, Black's Law Dictionary, WESY Publishing CO. 1968, էջ 384:
⁴ Carl Schmitt, Verfassungslehre, Berlin 1993, S. 37-40.
⁵ Витрук Н.В, Верность Конституции. 2-е изд. М.: РГУП, 2016, С.113.
⁶ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնարանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 35:
⁷ Հարությունյան Գ.Գ., Սահմանադրական մշտադիտարկում/ Եր.: Եժար, 2016. էջ. 13:
⁸ Эбзеев Б. Прямое действие и непосредственное применение Конституции Российской Федерации - гарантия прав и свобод человека и гражданина // Право и управление: XXI век. N1 (1), 2005. С. 72.
⁹ Рассел Г. Конституционализм: опыт Америки и других стран – <http://www.infousa.ru/government/-dmpaper2.htm> (09.03.2009).

Արման Տեպանյան
 Юрисконсульт Центрального банка Республики Армения
 аспирант кафедры конституционного и муниципального права
 Российско-Армянского (Славянского) университета

ՔԵԶԻՍՈՄԵ

Гармонизация реальной публичной жизни конституционным решением

В данной статье представлены современные проблемы теории конституционного права. Указывается о логике изменений представлений и подходов об Основном законе в процессе развития времени. Особый акцент делается на необходимость утверждения достаточного уровня конституционной культуры.

Ключевые слова: Конституция, конституционное право, народовластие, конституционализм, конституционная культура, конституционный мониторинг.

Arman Stepanyan
 Central bank of the Republic of Armenia, legal counsel
 PhD student of the
 Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

Harmonization of public life realities with the constitutional solutions

This article presents modern problems of the theory of constitutional law. It indicates the logic of changes in views and approaches to the Basic Law in the process of time development. Particular emphasis is placed on the need to approve a sufficient level of constitutional culture.

Keywords: Constitution, constitutional law, democracy, constitutionalism, constitutional culture, constitutional monitoring.